ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 68/09

Քաղ. Երևան 15 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. սեպտեմբերի 15-ի նիստում (արձանագրություն № 73/2) քննարկեց N.V.Nutricia (NL) ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի կողմից ներկայացված 2009թ. օգոստոսի 27-ի բողոքը (մտից հ.649, 27.08.2009թ.) ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ N.V.Nutricia (NL) ընկերության НУТРИЛОН (IR 683343) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2009թ. մայիսի 29-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15.1-ին և 98-րդ կետերի համաձայն НУТРИЛОН (IR 683343) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում հայտարկված 05-րդ դասի ապրանքների նկատմամբ նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ համարելով, որ նշանը չի կարող գրանցվել N.V.Nutricia (NL) ընկերության անունով՝ նույնատիպ ապրանքների համար INTERNATIONAL BUSINESS COMPANY "NUTRITEK INTERNATIONAL, CORP." P.O. (Box 3321, Road Town, Tortola, British Virgin Islands) ընկերության անունով ավելի վաղ առաջնությամբ գրանցված NUTRILAK (ՀՀ վկ.N 11676) և НУТРИЛАК (ՀՀ վկ.N 11677) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով:

Սակայն բողոքարկողը բողոքին կից ներկայացրել է հակադրված ապրանքային նշանների սեփականատեր INTERNATIONAL BUSINESS COMPANY "NUTRITEK INTERNATIONAL, CORP." P.O. (VG) ընկերության կողմից N.V.Nutricia (NL) ընկերությանը տրամադրված նամակ-համաձայնագիրը առ այն, որ նա համաձայն է НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանի գրանցմանն ու օգտագործմանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված 05-րդ դասի ապրանքների համար: Ելնելով դրանից, բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական

փորձաքննության որոշումը և պահպանություն ընձեռել НУТРИЛОН ապրանքային նշանի IR 683343 միջազգային գրանցմանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված դասերի բոլոր ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ գրանցման ներկայացված N.V.Nutricia (NL) ընկերության НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանը տարբերվում է նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ գրանցված՝ NUTRILAK (ՀՀ վկ.N 11676) և НУТРИЛАК (ՀՀ վկ.N 11677) փորձաքննության կողմից հակադրված նշաններից ընդամենը վերջին երկու տառերով, ինչը կարող է շփոթեցնել սպարողին ապրանքի ընտրության հարցում, հետևաբար կրկնական փորձաքննության 2009թ. մայիսի 29-ի որոշումը կայացվել է օրինական հիմքերով: Սակայն հաշվի առնելով նոր ի հայտ եկած հանգամանքը, այն է՝ հակադրված ապրանքային նշանի սեփականատեր INTERNATIONAL BUSINESS COMPANY "NUTRITEK INTERNATIONAL, CORP." P.O. (VG) ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանի գրանցման և օգտագործման վերաբերյալ N.V.Nutricia (NL) ընկերությանը տրամադրված նամակ-համաձայնագիրը, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ վերացել են НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքում մերժելու հիմքերը, քանի որ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «ապրանքային նշանի սեփականատիրոջ համաձայնությունը կարող է հիմք հանդիսանալ տվյալ ապրանքային նշանին շփոթելու աստիճան նման նշանի գրանցման համար:»

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել N.V.Nutricia (NL) ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2009թ. մայիսի 29-ի կրկնական փորձաքննության որոշումը և НУТРИЛОН (IR 683343) ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետությունում՝ հայտարկված 05-րդ դասի ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան